ՈՐՈՇԵՑ

1. Երևանի քաղաքապետարանի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Թիվ ԵԴ2/8862/02/23 դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից 18.08.2023 թվականին կայացված վճիռն ամբողջությամբ բեկանել և փոփոխել՝ վճռի եզրափակիչ մասը շարադրելով հետևյալ կերպ.

«1. «Կապիտալ Դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Կապիտալ Դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հարությունյանի կողմից 18.05.2023 թվականին կայացված՝ թիվ 1176-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:»:

3.«Կապիտալ Դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 75,000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան հրապարակման պահից 15-օրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ն. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ **Ն. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**